

մէջ կգնենք: Իսկ այնտեղ մեր եղբայրները, Հադէսի օրէնքները, քեզ հետ լաւամիտ չեն վերաբերուի, իմանալով, որ քո կարողութեան չափ փորձել ես մեզ ոչնչացնել: Մի լսիր ուրեմն Կրիտոնի ասածներին, այլ աւելի մեզ լսիր:

XVII. Այո, սիւրբի ընկեր Կրիտոն, լաւ իմացիր, որ այս եմ լսում, ինչպէս կօրլըանտներին*) Ֆլէյտի ձայնը. նրանց այդ ձայնը այնպէս զօրեղ է հնչում իմ ափսոսանքներում, որ ուրիշ խօսքեր լսել չեմ կարողանում: Իմացիր ուրեմն որ այս է իմ համոզմունքը և եթէ սկսես հակաճառել, ի զուր կլինի: Սակայն եթէ կարծում ես, թէ որևէ օգուտ կարող է տալ քո խօսքը ասա:

Կրիտոն—Ոչ, սիւ Սոկրատէս, ոչինչ չեմ կարող ասել:

Սոկրատէս—Վերջացրու ուրեմն, սիւ Կրիտոն, անենք այնպէս, քանի որ Աստուած է առաջնորդում դէպի այն:

Բնագրից թարգմանեց Pessimist

ՎԱՐՍԿԻՉ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ա.

Մարդկային կեանքի մէջ ամեն ինչ ձևոք է բերում սովորութեամբ և նմանօրութեամբ: Ինչպէս որ նորածին երեխան բառերի արտասանութիւնը, առարկաների անունները, մտքերի արտայայտութիւնը սովորում է հետզհետէ, նմանելով իրան շրջապատող մեծերին, այսպէս էլ այդ նմանելու և ձևեր ընդունելու իւրացնելու սովորութիւնը շարունակում է մարդկային կեանքի ամբողջ ընթացքում նմանուելու ձգտումը, որ արհամարհանքի կամ ծաղրելու ժամանակ մենք «կապկութիւն» ենք անուանում, այնքան զօրեղ է, որ իրօք մեզանից ոչ մէկը ազատ չէ այդ ձգտումից-կապկութիւնից: Ամենքը միատեսակ և նոյն ժամանակի ընթացքում չեն իւրացնում նմանուելու հակումը, այդ կախում է հասակից, սեռից, կրթութեան ձևից և ընաւորութիւնից-տեմպերամենտից: Ամենից շատ, արագ և պատճէնօրէն նմանում են փոքրահասակները, դիւ-

*) Կօրլըանտները քրմեր են և Փռիւզիայի առաւուածուհու՝ Կլերիլայի հետևողները: Սրա տօներին աղմկալի երաժշտութիւն էր տեղի ունենում:

տասնեակ հազարաւոր վերստեր իրարից հեռու երկրում նկատուում են նոյնպիսի քաղաքակրթական ապացոյցներ, որոնք այլապէս բացատրել անհնարին կլինէր. որ գիտութիւնը, ուսումը, կեանքի այս կամ այն երևոյթը երևալով մի տեղ, նմանողութեան օրէնքով անցնում է երկրագնդի մէկ ծայրից մինչև միւսը և այդ մարդկային կեանքի առաջին տարիներից սկսած մինչև մեր օրերը, իբրև ապացոյց նա քրքրում է հնագիտական արխիւները և որոշ շրջանները մէջ բերելով ցոյց է տալիս, որ հնումն, քարի, բրոնզի, երկաթի դարաշրջանումն էլ նոյնն է կրկնուել, որ առաջ է բերում պատմութիւնն իբրև այդ բանի ապացոյց, իսկ առանց այդ գիտութիւնների էլ բաւական է եթէ մենք քիչ աշարջութեամբ, քննադատօրէն նայենք մեր շուրջը և կ'ստանանք, որ մեր կեանքի մէջ ոչինչ չի կատարուում առանց նմանուելու:

Նմանուելու հակումը, ըստ Տարդի, անհրաժեշտ պայման է առաջադիմութեան և քաղաքակրթութեան համար, ուրեմն օգտակար է. սակայն նմանուելու դէպքեր կան, որոնք այլևս օգտակար համարել չի կարելի, որովհետև ընդունում են հիւանդագին երևոյթ և եթէ համաճարակի ընաւորութիւն են ստանում, մեծամեծ դժբաղդութիւնների պատճառ են դառնում:

Ֆիզիքական վարակիչ հիւանդութիւնները—դիֆտերիա, ծաղիկ, ժանտախտ, խօլերա, մենինգիտ, սիֆիլիս և այլն—երբ երևան են գալիս մի օրէն տեղում, մարդիկ առանձին հոգածութեամբ աշխատում են համաճարակի առաջն առնել և դրանցից շատ շատերի դարմանը գտնուած է: Մինչդեռ հոգեկան վարակիչ հիւանդութիւնների վրա նոյն իսկ լուրջ գիտական ուշադրութիւն իսկ չի դարձրած և ժողովրդի ահագին մեծամասնութիւնը տեղեկութիւն չունի այդպիսի հիւանդութեան մասին: Գուցէ, ասում ենք, այդ առաջ է գալիս այն պատճառից, որ սուր համաճարակները ուշ ուշ են կրկնում, իսկ մանր համաճարակները այնքան սովորական են, որ տեսողութիւնից վրիպում են: Բայց քանի որ դա կայ, ապա ուրեմն հարկէ ուշադրութեան առնել և երեցած դէպքում աշխատել շուտով առաջն առնել, որպէսզի համաճարակ չդառնայ և դժբաղդութիւններ չպատճառի:

Ինչպէս ֆիզիքական հիւանդութիւններն, նոյնպէս և հոգեկան հիւանդութիւնները տարափոխվում են երկու ձևով. ժառանգաբար և անցնելով մէկից միւսին: Ժառանգական հոգեկան հիւանդութիւնները նոյն ձևով և նմանութեամբ են անցնում սերնդից սերունդ, ինչպէս ֆիզիքականը և այդ հիւանդութեան հակումն կարող է ուժեղանալ կամ թուլանալ, կարող է մի սերունդ մէջ տալ և անցնել պապից թոռին, կարող է դարգանալ և երևալ միայն որոշ սեռի զաւակների մէջ, մի խօսքով ճիշտ այնպէս, ինչպէս ֆիզիքա-

տասնեակ հազարաւոր վերստեր իրարից հեռու երկրում նկատուում են նոյնպիսի քաղաքակրթական ապացոյցներ, որոնք այլապէս բացատրել անհնարին կլինէր. որ գիտութիւնը, ուսումը, կեանքի այս կամ այն երևոյթը երևալով մի տեղ, նմանողութեան օրէնքով անցնում է երկրագնդի մէկ ծայրից մինչև միւսը և այդ մարդկային կեանքի առաջին տարիներից սկսած մինչև մեր օրերը, իբրև ապացոյց նա քրքրում է հնագիտական արխիւները և որոշ շրջանները մէջ բերելով ցոյց է տալիս, որ հնումն, քարի, բրոնզի, երկաթի դարաշրջանումն էլ նոյնն է կրկնուել, որ առաջ է բերում պատմութիւնն իբրև այդ բանի ապացոյց, իսկ առանց այդ գիտութիւնների էլ բաւական է եթէ մենք քիչ աշարջութեամբ, քննադատօրէն նայենք մեր շուրջը և կ'ստանանք, որ մեր կեանքի մէջ ոչինչ չի կատարուում առանց նմանուելու:

Նմանուելու հակումը, ըստ Տարդի, անհրաժեշտ պայման է առաջադիմութեան և քաղաքակրթութեան համար, ուրեմն օգտակար է. սակայն նմանուելու դէպքեր կան, որոնք այլևս օգտակար համարել չի կարելի, որովհետև ընդունում են հիւանդագին երևոյթ և եթէ համաճարակի ընաւորութիւն են ստանում, մեծամեծ դժբաղդութիւնների պատճառ են դառնում:

Ֆիզիքական վարակիչ հիւանդութիւնները—դիֆտերիա, ծաղիկ, ժանտախտ, խօլերա, մենինգիտ, սիֆիլիս և այլն—երբ երևան են գալիս մի օրէն տեղում, մարդիկ առանձին հոգածութեամբ աշխատում են համաճարակի առաջն առնել և դրանցից շատ շատերի դարմանը գտնուած է: Մինչդեռ հոգեկան վարակիչ հիւանդութիւնների վրա նոյն իսկ լուրջ գիտական ուշադրութիւն իսկ չի դարձրած և ժողովրդի ահագին մեծամասնութիւնը տեղեկութիւն չունի այդպիսի հիւանդութեան մասին: Գուցէ, ասում ենք, այդ առաջ է գալիս այն պատճառից, որ սուր համաճարակները ուշ ուշ են կրկնուում, իսկ մանր համաճարակները այնքան սովորական են, որ տեսողութիւնից վրիպում են: Բայց քանի որ դա կայ, ապա ուրեմն հարկէ ուշադրութեան առնել և երեցած դէպքում աշխատել շուտով առաջն առնել, որպէսզի համաճարակ չդառնայ և դժբաղդութիւններ չպատճառի:

Ինչպէս ֆիզիքական հիւանդութիւններն, նոյնպէս և հոգեկան հիւանդութիւնները տարափոխվում են երկու ձևով. ժառանգաբար և անցնելով մէկից միւսին: Ժառանգական հոգեկան հիւանդութիւնները նոյն ձևով և նմանութեամբ են անցնում սերնդից սերունդ, ինչպէս ֆիզիքականը և այդ հիւանդութեան հակումն կարող է ուժեղանալ կամ թուլանալ, կարող է մի սերունդ մէջ տալ և անցնել պապից թոռին, կարող է դարգանալ և երևալ միայն որոշ սեռի զաւակների մէջ, մի խօսքով ճիշտ այնպէս, ինչպէս ֆիզիքա-

կան վարակիչ հիւանդութիւնները, իսկ ստացական վարակիչ հոգեկան հիւանդութիւններն անցնում են հիւանդից դէպի առողջը և երբեմն ընդունում են համաճարակի բնաւորութիւն: Լինում են բացառիկ անհատներ, որոնք վարակուելու ընդունակութիւն չունեն. այսպէս օր. Վալլենբերգը իր «հոգեկան տարափոխիկ հիւանդութիւններ» գրքում թւում է, որ 108 խելագարութեան դէպքում 5-ը անցել է օտարի վրա, իսկ մնացած դէպքում ընտանիքի մի անդամից միւսին. իսկ վերջիններից 32 դէպքերում հիւանդացել են քոյրերը, իսկ 12 դէպքում՝ ամուսինները:

Թէ մէկ և թէ միւս ձևով վարակման դէպքերը յաճախ են կրկնուում, մինչև իսկ սովորական են և նոյնքան զոհեր են տանում, որքան միւս ֆիզիքական վարակիչ հիւանդութիւնները, բայց այս ձևի վարակումն, ըստ իս. աւելի մեծ հասարակական նշանակութիւն ունի, քան ֆիզիքականը, մինչդեռ ինչպէս վերն ասացի, զրա վրա քիչ ուշադրութիւն են դարձնում և շատ շատերը զրա գոյութիւնն անգամ չգիտեն:

Հոգեկան վարակիչ հիւանդութեան անցնելու արտայայտիչն այն է, որ վարակուածը արտայայտում է նոյն նշաններն, ինչ որ ունի հիւանդը. Եօրդեր, Վալլենբերգ և Լեզրեն այդ հաջցին նուիրած գրութիւններում բերում են բազմաթիւ օրինակներ, թէ ինչպէս իրար մօտ ապրող անհատները վարակուում են իրարից և այդ օրինակներից կարելի է հետեցնել, որ խիստ վտանգաւոր է հոգեկան հիւանդին թողնել ընտանիքի մէջ, այլ երբ երևեցաւ հիւանդութեան նշանները, աշխատելու է նրան փոխադրել առանձին բնակարան և խնամատարութիւնը յանձնել այնպիսի անհատի, որ փորձով յայտնի է իբրեւ վարակուելու անընդունակ:

Վարակիչ հոգեկան հիւանդութիւնն երեք ձևով է անցնում. 1. հոգեկան հիւանդութեան անցնելը զնցումներով, 2. դանդաղ, աստիճանաբար գաղափարների ներշնչումով և 3. ժամանակի ընթացքում հիւանդի հետ հաղորդակցութիւն ունեցած ժամանակ նրան նմանուելով:

Աւելորդ չեմ համարում մի քանի օրինակներ բերել քաղելով վերոյիշեալ հոգեբուժների գրութիւններից որոնք ապացուցանում են յիշեալ երեք ձևերով հոգեկան հիւանդութեան վարակման դէպքերը. —

1. 1884 թուին Բագէլի հիւանդանոցն են բերում 24 տարեկան մի օրիորդ, որ խելագարուել էր նրանից, որ իբր թէ իրանց տանը կեցող զինուորները կախարդել են իրան: Խելագարութիւնը սուր բնաւորութիւն ունէր. նա գոռում էր, օգնութիւն էր կանչում իբր զինուորը նրան ծնծում է, ներս էր վազում սենեակ և ձեռքն ընկած առարկաները շուռ տալիս, ջարդում: Տասն օրից յետոյ հիւանդա-

նոց բերին նրա փոքր քրոջը, խելագարութեան նոյն նշաններով, հարց ու փորձից պարզուեց, որ սա մի առ ժամանակ, ընդամենն մի օր, խնամք է տարել իր քրոջ վրա նրա հիւանդութեան ժամանակ, չնայելով այդքան կարճ ժամանակին, մեծ քրոջ զարհուրելի տեսքն այնպէս խիստ էր ազդել կրտսեր քրոջ վրա, որ նա նոյն գիշերը չի կարողացել քնել երկիւղից, անդադար նայում է եղել թէ դռներն ու լուսամուտները ամուր են փակուած, զինւորները հօ փականքի ծակից չեն նայում և սկսում է գանգատուել, որ վախենում է զինուորներից, որոնք իբր թէ իրան էլ են կախարդել, ի վերջոյ մի օր էլ փորձ է անում լուսամուտից դուրս նետուել զինուորներից ազատուելու համար։ Այս երկու քոյրն էլ ֆիզիքապէս առողջ և երկուսն էլ միջնակարգ կրթութիւն ստացած են եղել։

Այս դէպքը զօրեղ ցնցումով հիւանդութիւնն անցնելու ձևն է, որ մեծ նմանութիւն ունի միւս հոգեկան հիւանդութիւնների նման եղանակով անցնելուն, բայց որովհետեւ խելագարութիւնը նոյն սիմպտոմներով, նոյն բովանդակութեամբ է անցնում, այդ պատճառով դրանց անշուշտ պիտի դասել հոգեկան վարակիչ հիւանդութիւնների շարքում։ Թէև շտապեմ աւելացնել, որ այսպիսի ցնցումներով հիւանդութեան անցնելու դէպքերը համեմատաբար ուշ-ուշ են կատարւում։ աւելի յաճախ պատահում են վարակման դէպքերը դանդաղ, աստիճանաբար գաղափարների ներշնչումով օրինակ։—

2. 1887 թուին Հալլէի հոգեկան հիւանդութիւնների բուժարանում գտնւում էին մահարձանների գործարանատէրն իր երկու աղջիկներով, այդ ընտանիքը հետեւեալ պատմութիւնն ունի. 1877 թուին աղջիկները իբրեւ վկայ կանչուած էին դատարան ցուցումներ տալու Դատարանի անսովոր կարգերը փոքր աղջկայ վրա հիւանդացուցիչ տպաւորութիւն գործեցին, նրան թուում էր, որ դատարանները ամեն երեկոյ ժողովում են իրանց լուսամուտի առաջ, որպէսզի խանդարեն իր մտածմունքները։ Մայրն ու մեծ քոյրը աչխատում էին ցրել հիւանդի զառանցանքները և հաւատացնել, որ իր երեակայած ոչ մի դէպքը իրօք գոյութիւն չունի։ Սակայն այս առթիւ խօսակցութիւնը սրովհետեւ յաճախ էր կրկնւում և փոքր քոյրն աւելի համոզիչ ու դրական էր յայտնում իր մտածմունքները, ուստի հետզհետէ իր կողմը թեքեց մեծ քրոջը և համոզեց նրան, որ իր երեակայութիւնը ճշմարիտ է։ Այդ ժամանակից սկսած նրանք միասին էին երեակայում։ Նրանց թուում էր թէ պատօրը եկեղեցում քարոզելիս միշտ դէպի նրանց կողմն է նայում և իբր թէ մի անգամ էլ նրանց յայտնեց, որ նրանք ամուսնացած և բաժանուած են։ Այնուհետեւ նրանք իրանց համարում էին պսակալոյժ կանաչք, ապա եկան այն համոզման, որ իրանց անհաւատա-

րիւմ ամուսինները դատաւարտուած են և պարտաւորուած նրանց սպորուստի միջոցներ տալուն: Ակսեցին պատմել, որ նախարարները իրանց բարեխառնութիւն փոխարէն թանկագին ընծաներ են ուղարկում, բայց նրանք այդ հարստութիւնը չեն կարողանում ստանալ քաղաքացիների նախանձի ու խորամանկ միջոցների պատճառով: Մնողները վշտահար աշխատում էին համոզել աղջիկներին, որ նրանց անածմունքն անտեղի է, որ երեակայութեան ծնունդ է միայն, որ ապագային են այդպիսի յոյսեր ունենալը, սակայն ի զուր, աղջիկները անդրգուշակ մնացին: 1885 թուին մեռաւ նրանց մայրը: Այնուհետեւ երկու աղջիկները անդադար համոզում և հաւատացնում էին իրանց հօրը, որ նրանք արգարացի են մտածում և թէ իրանց դանդաղ քաղաքացիների նախանձի մասին իրաւացի է, այնքան ասացին ու կրկնեցին, որ ի վերջոյ 1886 թուին հայրը զնադ պոստատուն երեակայական ընծաներն ու աղջիկների այրիութեան թաշակն ստանալու և երբ բաւարարութիւն չստացաւ, գրաւոր պիմումն արտա նախարարին: Ի վերջոյ, նա էլ վարակուելով իր աղջիկներից, սկսեց դանդաղուել մարդկանց նախանձի մասին և խօսել իրանց դէմ յարուցած հալածանքի մասին, ի միջի այլոց, երեքն էլ դանդաղուած էին, որ քաղաքի ամենապարզուած մարդիկ իրանց տան առաջ ժողովներ են կազմում, նրանց վիրաւորում են, աղջիկներին թախանձում են կրկին ամուսնանալ, և ամեն կերպ տանջում են նրանց հեռագիրներով ու հեռախօսի միջոցաւ:

3. Մի ուրիշ գէպը մի ջահել աղջիկ կորցնելով իր ինքնասպան ծնողներին, ընկել էր աղչութեան մէջ և ի վերջոյ դարձաւ մեղաւաղձոտ, նա չարուհեակ ինքն իրան համոզում էր, որ ծնողների ինքնասպանութիւնը հետեանք էր հալածանքի և թէ քաղաքացիք աշխատում են իրանց տունը ամբողջովին բնաջինջ անել: Նա սկսեց կասկածով նայել ամենքին, փողոցով անցնելիս լսել իրան հասցէին ուղղած հայհոյանք և նախատինք և հաւատացած էր, որ թշնամիները վարձել էին յատուկ մարդիկ, իրան վիրաւորանք հասցնելու համար: Իրան ուղղած ամենաանմեղ խօսքերի մէջ նա նկատում էր ակնարկներ, որ ինքն էլ պէտք է ինքնասպանութիւն գործի: հիւանդն ունէր մի փոքր քոյր, որ սկզբում անտարբեր էր դէպի իր քրոջ գառանցանքները, բայց հետզհետէ ենթարկվելով նրա աղոկեցութեանը, ամբողջովին ընդունեց նոյն յիմար դադափարները:

4. Կրկին մի օրինակ, խելագար կինը համոզում է իր ամուսնուն և աղջկան իրանց կեանքին վերջ դնել ինքնասպանութեամբ և այնքան յամառութեամբ է ներշնչում այս դադափարը նրանց մէջ, որ ի վերջոյ երեքն էլ համոզուած են, որ անպաճառ պէտք է ինքնասպան լինեն: Գիշերը ներս են բերում կիտարեալ ածուխ: Երկրորդ օրը մարդուն և կնոջը մեռած են գտնում, իսկ աղջկան յաջողում

են փրկել, որը և մանրամասն պատմում է ամբողջ եղելութիւնը:

5. Դարձեալ մի օրինակ. 1888 թուին ևս ակահատես եղայ և ծանօթացայ հետեւեալ ղէպերն Ե. քաղաքում. մի օրիորդ, որ աւարտել էր Ե. քաղաքի պրօգրիմագիան, և վարժուհի էր օրիորդաց դպրոցում և ինձ շատ մօտիկ անձնաւորութիւն, որի հետ միասին ուսուցչական պաշտօն էինք վարել և յաճախ տեսակցում էի, վերջերը ինձ թւում էր, որ նա ինչ որ հոգեկան ծանր դրութեան մէջ էր. լուռ էր, խուսափում էր խօսելուց, քիչ դալկացած. ինձ տարօրինակ էր թւում այս բոլորը, որովհետեւ մինչ այդ նրան հանգիպելիս միշտ տեսնում էի առողջ կենսութեամբ: Մի քանի շաբաթից յետոյ օրիորդը երևում էր միշտ աչքերը կարմրած, կարծես անշափ լաց էր եղել. մի օր օրիորդի մայրը ինձ դանդաղում է, որ ազդիկը շատ է փոխուել, քիչ է ուտում, քիչ խմում, համարեա չի քնում և չէր կարողանում բացատրել այս բոլորն պատճառը: Ինձ վերին աստիճանի հետաքրքրեց այդ ղէպը և աշխատեցի պատճառն իմանալ. ամբան սկզբի օրերից մէկն էր, երբ մենք իրանց պարտիզում գրօնում էինք, եկաւ նրա ընկերուհին, նոյնպէս մի ջահիլ օրիորդ, որի հետ միասին աւարտել էին դպրոցը և նոյն ուսումնականում վարժուհի էին, որին երբ նա տեսաւ, անմիջապէս ինձ թողեց, մօտեցաւ նրան և գրկախառնուած սկսեցին լալ: Այս տարօրինակ հանգամանքն իմ ուշադրութիւնը գրաւեց և ես առանց տատանվելու մօտեցայ նրանց, բաժանեցի իրարից և եղբօր կարեկցութեամբ հարցրի այդքան վշտի պատճառը. իմ նախկին պաշտօնակից օրիորդը աչքերը սրելով պատմեց, որ իրանք երկուսն էլ (ինքն ու իր ընկերուհին) դժբաղդ են, որ առաջին անգամ նա այդ ճշմարտութիւնը յայտնել է և ինքն էլ համոզուել, որ դժբաղդ են և միակ միտիթ արութիւնը լաց լինելն է և որ ամենայն օր, որոշ ժամերին նրանք այդպէս լալով միտիթ արւում են: Ո՛վ գիտէ, ինչ ծանր հետեւանքներ կարող էր ունենալ այս օրիորդների ընթացքը թէ իրանց և թէ աշակերտուհիների վրա, եթէ բարեբաղդաբար արձակուրդները վրա չհասնէին, երբ ամառը հիւանդ օրիորդը վախճանուեց, իսկ իմ ծանօթ օրիորդը շնորհիւ ծնողների հոգածութեան, ապա ամուսնանալով միանգամայն բուժուեց այդ զառանցանքից և այժմ առողջ, բազմանգամ ընտանիքի մայր է:

Հետաքրքիր է այն, որ խելագարի յիմար գաղափարներին հաւատացող անձը կէտ առ կէտ կրկնում է հիւանդի բոլոր անմիտ գարձուածները և այդպիսով ներկայանում է նրա խելական պատճէնը: Այսպիսի ղէպերում առողջանում են միայն վարակուածները, երբ նրանց բաժանում են խելագարի ընկերակցութիւնից և ժամանակի ընթացքում համոզում են նրանց գաղափարների անհեթեթութիւնը, իսկ առաջին հիւանդացողը մեծ մասամբ անբուժելի

է փնտմա Բայց քիչ չի պատահում, որ վարակուածը իր հոգեկան հիւանդութիւնը տալիս է նրանց, որոնք ուզում էին համոզել հիւանդին:

Նրբորդ տեսակ վարակվելու ձեռ-այսինքն հիւանդի հետ երկար ժամանակ հաղորդակցութիւն ունենալով նմանուելու գէպքերը թէ սովորական են և թէ աւելի յաճող են պատուաստուում և տեսական են լինում:

Իրրև ապացոյց բերենք մի օրինակ. Նվեցարիայի Բարձրագոյն դպրոցներից մինում Տ. անունով մէկը ուսուցչապետ էր. նա մեռաւ չթողնելով իր ընտանիքին-կնոջն ու երկու աղջկան Ագնէսին և Մարիամին որ և է ապրուստի միջոց: Այլին դասեր էր տալիս ստորին վարժարաններում և գրանով հայթաթում օրական պարէնը: Այսպիսի անակնկալ աղքատութիւնը տիկնոջ մէջ կասկած յարուցեց և նա երկիւղի մէջ էր թէ չլինի գրկուի ապրուստի այս վերջին միջոցից էլ, ուստի սկսեց կասկածով վերաբերուել մարդկանց. նրանց մէջ տեսնում էր միայն նախանձոտներ ու թշնամիներ, զաղտնի ականջ էր դնում և ծածուկ հետևում դրացիներին, նրան թւում էր թէ ամենքը իր մասին են խօսում և իրան բամբասում: Այս տարօրինակ վարմանց համար նրան զրկեցին պաշտօնից: Այդ ժամանակ նրա զառանցանքների առարկան Ֆրանկմասօններն էին, որոնք իւր ինտրիգներ են լարում իր դէմ: Մեծ աղջիկը-Ագնէսը այդ ժամանակ աւարտելով գիմնադիական դասընթացը մտաւ բժշկական բաժինը: Նա շուտով իւրացրեց մօր գաղափարները, բայց միայն արտացոլող չեղաւ, այլ աւելի առաջ դնաց քաշելով իր յետիւց նաև մօրը: Այսպէս օրինակ, նա ենթադրում էր, որ ազգականները սխալուում են իր սեռի մասին, որ իսկապէս ինքը տղայ է, չնայելով որ ծնուել է կանացի նշաններով և այս բացատրում էր հերմաֆրոդիտիզմով (hermaphroditisme—երկսեռ, արու էք) և որ կանացի յատկութիւնները կամաց կամաց իւր տեղի են տալիս արականին: Այս ժամանակից սկսած մայրը աղջկայ գաղափարներն ընդունելով նրան ոչ թէ Ագնէս էր կանչում, այլ Ալֆրէդ: Փոքր աղջիկը առողջ փնաց և ստիպուած էր երկու զառանցողների հետ միասին ապրել: Նրանք շատ անգամ աշխատում էին համոզել Մարիամին, որ իրանց գաղափարները ճշմարիտ են, բայց երբ տեսան որ իրանց ջանքերը զուր են անցնում, թողնելին և անուանեցին նրան «անդարդացած» չնայելով, որ Մարիամը ընդհանուրի կարծիքով խելօք և ընդունակ աղջիկ էր: Յիմար գաղափարներն ստիպեցին մօրն ու աղջկան երևակայական հալածանքից ազատուելու համար ճանապարհորդել մէկ տեղից միւս տեղ, մինչև անգամ մի առ ժամանակ նրանք գնացին Ամերիկա և այդ ճամբորդութիւնների ժամանակ բազմաթիւ արկածների հանդիպեցին. Մարիամը ամեն

տեղ ընկերակցելով մօրն ու քրոջը և վկայ լինելով նրանց բոլոր դորձողութիւններին, կամաց կամաց սկսեց վարակուել նրանց դադափարով և երբ նրանք վերադառնում էին Ամերիկայից հայրենիք, մայրն ու երկու աղջիկներն արդէն բռնուած էին նոյնանման խելագարութեամբ, երեքն էլ Ագնէսին տղամարդ էին համարում, նրանց թւում էր թէ նաւի մէջ ճանապարհորդակիցները կամենում էին հետամուտ լինել նրանց, նրանք լսում էին իրր վերադարձան խօսքեր և տեսնում էին ակնարկներ Ագնէսի հերմափրօգիտ լինելու համար:

Հարկաւ, որքան էլ շատ են այսպիսի մէկ անհատից դէպի միւսն անցնող նման հիւանդ գաղափարների դէպքերը, բայց դրանք համեմատած մարդկանց թուի հետ, շատ աննշան թիւ են կազմում, այդ մասամբ բացատրւում է նրանով, որ նոյնանման գաղափարները իւրացնելու համար բնաւորութեան, ներազային համակարգութեան և մտաւոր պատրաստութեան չափը քիչ թէ շատ մօտիկ պիտի լինին իրար: Բայց եթէ ընդհանուր պատկեր վերցնենք, երբ առ հասարակ հոգեկան հիւանդութիւններն անցնում են միւսին ոչ պատճէնօրէն, այլ հեռաւոր նմանութեամբ, այն ժամանակ կտեսնենք, որ այդպիսի վարակման դէպքերը շատ յաճախ են կրկնւում կեանքի մէջ: Այս վերջին դէպքում մարդիկ սուր խելագարութեան նշաններ չեն ցոյց տալիս, բայց իրօք մօտաւոր նշաններ ցոյց են տալիս:

Մարդկային ցեղի մէջ հոգեկան հիւանդութիւնների տեսակն ու արտայայտութեան ձեր շատ շատ է, և կասկած չկայ, որ նրանք ազդեցութիւն ունեն իրանց շրջապատողների վրա և պատուաստում են հասարակութեան մէջ վնասակար հակումներ, Հոգեբուժանքի տարիների զիտողութիւնը երևան է հանում բազմաթիւ այսպիսի ցաւալի երեոյթներ: Եվ չի ճանաչում իր ծանօթ շրջանում ամբողջ ընտանիքի, որոնց անդամները յայտնի են միեւնոյն տարօրինակութեամբ, շատ անգամ պատահում է տեսնել ընկերներ կամ բարեկամներ, որոնցից մէկը, անշուշտ հիւանդ, իր մեղքը տալիս է միւսին և նրանք շարունակում են միեւնոյն յանցանքը: Այսպիսի դէպքերը այնքան շատ են և սովորական, որ մենք տեսնում և անուշադրութեան ենք մատնում, մինչդեռ կրկին ասում եմ, սա հիւանդագիրն երեոյթ է, որի վրա հարկաւոր է լուրջ ուշադրութիւն դարձնել, դժբաղդութիւնից խուսափելու համար:

Բ.

Մինչև այժմ իմ բերած օրինակները անհատական վարակման

դէպքեր էին, երբ մի հիւանդ անձն իր հիւանդ գաղափարները տալիս է ուրիշի, որի վրա ազդում է վայրկենական տպաւորութեամբ (ցնցումով), երկար ժամանակ արծարծելով—ներշնչելով և կամ ժամանակի ընթացքում օրինակ հանդիսանալով իր հետ ապրողի համար—նմանողութեան եղանակով։ Սակայն դրանք միանգամայն նսեմանում են հոգեկան հիւանդութեան համաճարակման (epidemios) առաջ, որը մասսայական բնաւորութիւն է ստանում։

Հոգեկան հիւանդութեան համաճարակումը, որով բռնւում են բազմաթիւ մարդիկ, նոյն ձևով է կատարւում, ինչպէս միւս համաճարակ հիւանդութիւնները և սկսում է թոյլ հետզհետէ ուժեղանալով հասնում է ծայրայեղութեան և ապա կամաց կամաց կամ միանգամից թուլանում է և կամ կարող է տեւել երկար ժամանակ։

Այդպիսի համաճարակման դէպքեր պատմութեան մէջ շատ կան. բերեմ մի քանի օրինակ։

1. Հօլլանդիայում, առում է Լեզրեն, միջին դարերում Տիււսյանի արմատների (կոճղէզ) վաճառման համաճարակը երևան եկաւ։ Մի հօլլանդացի դէպի Չինաստան արած ճամբորդութիւնից վերադառնալիս իր հետ բերեց մի քանի տիււսյանի կոճղէզ և ծախեց մի քանի մարդու բաւական շահաւէտ գնով։ Դրանից յետոյ նաւաղնացիները սկսեցին բերել տալ այդ կոճղէզից և լաւ գնով վաճառել, հետզհետէ այդ արմտեղէնի առևտրով պարապողները շատացան և ամուսնները իրար ձեռքից խլիւղում էին։ Կոճղէզի սկզբնական նշանակութիւնը—իբրեւ զեղեցիկ արմատներ—նշանակութիւնը կորցրեց, կոճղէզի առևտուրը դարձաւ հիւանդագին պահանջ, նրա գինը երբեմն բարձրանում, երբեմն ընկնում էր, սկսեւեց տենդային սպեկուլյնացիա. կոճղէզը թանկ գնում էին աժան ծախելու համար։ Մի խօսքով ամենքն էլ յիմարացել էին։ Ամեն դասակարգի, խաւի մարդիկ թողած իրանց բան ու գործը կոճղէզի առևժախսով էին զբաղւում։ Շատ շատերը կոճղէզի վրա դրին իրանց ամբողջ կարողութիւնը, կոճղէզի գինը հասցրին աներեակայելի բարձրութեան, այս համաճարակը տեւեց մի քանի տարի, ապա մի անգամից կարճեա ամենքը սթափուցին և ըմբռնեցին, որ խկապէս կոճղէզը կոպէկի արժէք չունի։ Կատաղի առևտուրը տեղի առեւեց սոսկալի ճգնաժամի. էլ կոճղէզ գնող չկար. երեկուայ հարուստները, որոնք միլլիօնների կոճղէզ էին ամբարել, սնանկացան մինչև վերջին աղքատութեան։

2 Ամերիկական գիւտից յետոյ, երբ առաջին Իսպանական և Պորտուգալական արշաւախումբերը գնացին այնտեղ ու ահագին հողերի ու հարստութեան տէր դարձան, սկսեւեց Եւրոպայից դէպի Ամերիկա տենդային գաղթ, ամեն մի չափահաս իսպանացի երազում էր գնալ նոր աշխարհ և հարստանալ։ Պորտուգալացիներին

և իրապանացիներին հետևեցին ֆրանսիացիք, բրիտանացիք, հօլլանդացիք։ Անշուշտ ճարպիկները կարողացան մի կտոր հացի տիրանալ, բայց քիչ չէին և այնպիսիները, որոնք իրանց մայր երկրում ունեցած չունեցածը վաճառելով գնացին Ամերիկա և չկարողացան նոր բնակավայրում գործ գտնել հիասթափուած ձեռնունայն վերադարձան։

3. Էլ աւելի կործանիչ եղաւ այն մարդկանց վիճակը, որոնք լսելով Կալիֆօրնիայի (Ամերիկայի) ոսկու հանքերի մասին՝ շտապում էին այնտեղ օգտուելու։ Ժամանակակից ականատեսները պատմում են թէ ինչպէս հազարաւոր մարդիկ իրանց բարեկեցիկ կեանքը, յաջող գործը վտանգելով գնում էին Կալիֆօրնիա ոսկի ժողովելու և ծախսելով վերջին կոպէկները, աղքատացած վերադառնում էին։

4. Մարդկային ընչաքաղցութիւնը շատ անգամ դժբաղդութեան պատճառ է դառնում։ 1896 թուին ոմն Կօրմակ գտնում է Կանադայի (Հիւս. Արմ.) հիւսիս արևմտեան կողմը Ալեասկա թերակղզու սահմանի վրա Կլօնդարկ կոչուած տեղում հարուստ սկիւ հանքեր և այդ թուից ահագին բաղմութիւն շտապեցին այնտեղ ոսկի գիզելու նպատակով, ճիշտ է, առաջին գնացողները մեծ յաջողութիւն ունեցան, բայց 1902 թուից յետոյ ոսկի շահագործողների թիւը այն աստիճան շատացաւ, որ ոչ թէ ոսկի գիզել չէին կարողանում, այլ և նախկին ունեւոր մարդը հնչին՝ վարձով բանուոր էր մտնում գործաւորների մօտ իր խեղճ օրը մի կերպ անցկացնելու համար։

5. Ինչու հետոն գնանք, շատ ժամանակ է անցել այն օրից, երբ Բագուի նաւթարդիւնաբերութեամբ ախորժակը գրգռած մեր բանւորները իրանց խնայած գրամները գնում էին ակցէժներական ընկերութիւններ կազմելու համար, և միթէ հիւանդագին դրութիւն չէր այն տենդոտ եռանդը, որով մարդիկ ընկերութիւններ էին կազմում կարճ ժամանակում մեծ հարստութիւն գիզելու տենչով, սակայն մէկը միւսի յետեից անյաջողութեան հանդիպելով և կորցնելով նոր ձեռնարկութեան մէջ իրանց խնայած կոպէկները հիասթափուած յետ կանգնեցին։

6. Մի ուրիշ օրինակ, անցեալ դարու 70-ական թուականներին Վիեննայի բնակիչները ընտուած էին մի այլ յիմարութեամբ, ամեն օր համարեա կազմում էին զանազան ընկերութիւններ այն նպատակով, որ ակցիաներ ու օրլիգացիաներ գուրս թողնեն։ Այս երեակայական ընկերութիւնների ոչինչ արժէք չունեցող բաժնետոմսերը իրանց արժէքի եռապատիկ գնից բարձրացան։ Այս թղթերի ատետուրը (agiotage) մօտէ էր Վիեննացիների բոլոր զստակարգերի մէջ, ամենքը-հարուստ բուրժուայից ու արխատօկրատիայից սկսած

մինչև գործարանական բանուոր պրօլետարիատը, ծառաները, մշակ-
ներն ու կառապանները իրանց վերջին կոպէկները զնուծ էին, «գին»
ունեցող բաժնետոմսեր գնելու համար, որոնք հրատարակուած էին
նորելուկ ընկերութեան անդամների քմահաճութեամբ ոչ թէ հա-
զարներ, այլ երբեմն կոպէկներ արժէյող բաժնետոմսեր: Այստեղ
էլ նոյն յանկարծական սթափումն առաջ եկաւ և հազարաւոր
մարդիկ մի ժամանակ իրանց հարստութիւնը կազմող այդ արժե-
թղթերը այրեցին և աղքատացան:

7. Իտալիայում և Ռուսաստանում նոյնպիսի համաճարակ
բռնկեց պետական վիճակախաղի մէջ մտնելու ձեռք. թէ մէկ և
թէ միւս պետութեան մէջ սրամիտ հնար են գտել դրամ շորթելու
ժողովրդից. նրանք առաջարկում են ժողովրդին տալ 100 ռ. բայց
տանել 500-ից մինչև 200,000 ռուբլի. ինչ աւելի գրաւիչ բան
միանգամից հարստանալ ցանկացող ծոյլերի համար. և ահա, խա-
ղարկութեան տոմսերը ձեռքից ձեռք են անցնում և արժէքը բար-
ձրանում է գնի եռապատիկը, քառապատիկը: Հազարաւոր մարդիկ,
տարուայ յայտնի օրերին, երբ վիճակ են բաց անում, անհամբեր
սպասում են թերթերին, որ տեսնեն ընկել է իրանց 200,000-ը և
այդ յուսով ապրում են շատ շատերը: Այս համաճարակը արդէն
օրերի ու տարիների տեղութիւնն չունի, այլ տասնեակ տարիներէ:

8. Մի քանի տարի առաջ լրագիրները գրեցին տարօրինակ
մի երևոյթի մասին. Տաճկաստանում Բրուսային մօտ մի հայկա-
կան դիւղում, բոլոր չափահաս աղջիկները սկսել են կատուի պէս
մլաւել: Այս երևոյթը զանազան բացատրութիւնների առարկայ
դարձաւ, յատուկ մարդիկ գնացին այս անօրինակ դէպքը զիտելու:
Սա մեր կարծիքով վարակիչ հոգեկան հիւանդութեան մի պարզ
դէպք է եղել. ուրիշ ոչինչ. մէկը հիւանդացել է, ունեցել է մլաւա-
ցաւ և հետզհետէ վարակել է իր նմաններին. որը մի քանի ամիս
տեսելուց յետոյ, հաւանականաբար առաջին հիւանդի մահից յետոյ,
սկսել է թուլանալ ու գաղարել:

Եթէ այսպէս շարունակելու լինենք, օրինակներին վերջ չկայ:
Մեր ամեն օրը, ամեն ժամը բազմաթիւ օրինակ է տալիս այդ
տեսակ համաճարակի: Ո՞ր դէպքը, մեր կեանքի որ քայլը կուրօրէն
ընդօրինակութիւն չէ մէկը խենթութիւն ունի զիցուք վե-
րարկուն ուսին գցած ման գալ, ահա տեսնում էք հարիւրաւոր,
հազարաւոր մարդիկ հետեւում են նրա օրինակին, մէկը հագնում է
բարձրակրունի կօշիկներ և տասնեակ հազարներով նոյնն են կա-
տարում, մի ժամանակ հագնում էին ճոռացող կօշիկներ, ապա
անկրունիկներ, յիշում էք բոլորդ ութսունական թուականներին
կանացի այն սոցեղ յաւելումը, որ տուրնիւր էր կոչւում, կարժա-
մանակ, որ հագնում էին նրանք լայն, շատ լայն իւրկա, որ ահա-

դին տարածութիւն էր բռնում և հազնոդին շրջադառնում էր տախտակի պէս պատելով և կոչւում էր խաբարդար, առհասարակ բոլոր նորաձեւութիւններն, մօզան այդպիսի նմանուելու, կուրօրէն հետեւելու, հիւանդագին համաճարակման երևոյթներ չեն:

Քիչ առաջ ասացի, որ համաճարակման դէպքերն այնքան բազմաբովանդակ և բազմազան են, որ նրանց թուել, դասաւորել հնարաւորութիւն չկայ: Շատ անգամ մի բառ, որ շատ սովորական ամենքին յայտնի է, կամ առանձնապէս մի որ և է նշանակութիւն չունի, տեսնում ևս յանկարծ հնչուեց խիստ բարձրագոյ, սկսում են մարդիկ գործածել այդ առանձին պաթոսով, տեղի և անտեղի, սկսում են առանձին յարգանքով կամ արհամարհանքով վերաբերուել դրան, այդ առթիւ գրւում են գրքեր և պատկերներ, առաջ են գալիս կուսակցութիւններ, հասարակական շարժումն, բայց մի որոշ ժամանակ անցնելուց յետոյ այդ «նոր բառը» կորցնում է իր նշանակութիւնը և գործածական մնում է միայն ծանրապէս վարակուածների բերանում:

Կարծում ենք անհետաքրքիր չի լինիլ մեր ժամանակակից կեանքից մի քանի օրինակներ բերելը, որոնք համաճարակի բնաւորութիւն են ստացել:

Այսպէս. շատերը ձեզանից կարդացած կլինին ռուս երիտասարդ գրող Լ. Անդրէեի ռուս-եւապօնական պատերազմի սոսկումների ազդեցութեան տակ գրած «Կարմիր ծիծաղ» պատմուածքը: Մեր երիտասարդ տաղանդաւոր մանրավէպեր, պատկերներ գրող պ. Ա. Ահարոնեանը այդ գրքի ազդեցութեան տակ, մի այլ խժըժութիւնների—հայ-թրքական կոտորածների-նկարագիրը տուեց «Կարմիր հեքիաթ» վերնագրով: Եթէ հետևում էիք մեր լրագրութեան, դուք անշուշտ նկատած կլինէիք, որ «Կարմիր հեքիաթ» և «Կարմիր ծիծաղ» բառերը շատ անգամ էլն գործածում թղթակիցները 1906 թուի ընթացքում: Իսկ այժմ, թէև աւելի սոսկալի կոտորած տեղի ունեցաւ Ադանայում և շրջակայքում, բայց «Կարմիր ծիծաղը», «Կարմիր հեքիաթ» բառերը չեն լսւում: Այս ապացոյցը չէ, որ յիշեալ բառերը երեք տարի առաջ գործ ածելն այնպէս յաճախ հիւանդագին մի երևոյթ էր:


Ո՞վ է մոռացել, որ 1905 և 1906 թուին ամենքի բերանում հնչւում էր պօռլօկապիտ, պրօլօկատոր, բիւրօկրատ և այլ նման բառեր թերթեցէք այն ժամանակ հրատարակուած օրաթերթերը և կտեսնէք, որ ամեն մի համարում բազմաթիւ անգամ կրկնուած են այդ բառերը զանազան հոլովներով:

1905 և 1906 թուականներին հիւանդագին համաճարակի բնաւորութիւն էր ստացել նաև լրագիր հրատարակելը. մարդ երբ այդ թուականներին հրատարակուած թերթերի ցուցակն աչքի է

անցկացնում, ակամայ դալիս է այն համոզման, որ այդ ժամանակ-
ներում գոյութիւն է ունեցել հիւանդոտ հրատարակչացաւ, որով
վարակուած էին շատ շատերը:

Յիշուած թուականներում օդն այնպէս վարակուած էր գա-
նազան հիւանդութիւններով, որ մի առ մի թուել անհնարին է,
վերցնենք հենց գործադուլները. Ռուսաստանում այնպիսի լայն
ծաւալ էին ստացել գործադուլները որ ոչ մի կասկած չէր մնում,
որ մենք գործ ունենք վարակիչ հիւանդագին սովորութեան հետ.
գործադուլ էին անում բանուորները, գործադուլ էին անուն ար-
հեստաւորները, խանութի ծառայողները, աղախիւնները, ծառաները
քաղաքացիները, բանուորները, դասագուլ էին անում համալսարան-
ները, գիմնազիաները, բէալական և թեմական դպրանոցները, ծը-
խական դպրոցները, աշակերտներն ու ուսուցիչները և այս բոլորը
դիտելուց յետոյ դալիս ենք այն համոզման, որ այս դատագործա-
դուլները կուրօրէն նմանուելու հիւանդ երեւոյթ էին, որ մի որոշ ժա-
մանակ համաճարակելով դադարեց:

Նոյն հիւանդ ոգին դրութեան կատեգորիային է պատկանում
նաև Հայ-թուրքական ընդհարումը, որ մի ամբողջ տարի տևելով
աւիրեց երկիրը դժբաղդացնելով շատ ընտանիքներ....



ՆԱԽԱԿՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գ.

Սիրելի Սուրէն,

Ես արդէն սկսել էի իմ բարոյագիտական նամակա-
շարունակել խղճի մասին, բայց քո նամակը եկաւ հիմն ի
վեր փոխելու իմ մտադրութիւնը և մի առ ժամանակ մի
կողմ թողնելով խղճի մասին գրելս, պիտի խօսեմ քեզ
հետ կենսական նշանակութիւն ունեցող հարցերի մասին:

Քո նամակում դու յուսահատական նշաններ ես ցոյց
տալիս. գանգատում ես գիւղական կեանքի չափազանց
տաղաուկ և միակերպ լինելուց. գիւղացու անծայր եսասի-
րութիւնից:

Եթէ դու յիշում ես, ես հէնց իմ առաջին նամակում